



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի №Ա  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի №99Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի 2018 թվականի փետրվարի 28-ի №15 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մարտի 7-ի «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղին ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №99Ա որոշմամբ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղին տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0335 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «10 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2028 թվականի մարտի 7-ը» բառերով, որոշման 1-ին և 2-րդ կետերում «14296,250ՄՀգ/11496,250ՄՀգ, 14300,780ՄՀգ/11500,780ՄՀգ հաղորդման/ընդունման» բառերը փոխարինելով «14297,000ՄՀգ/11497,000ՄՀգ, 14303,030ՄՀգ/11503,030ՄՀգ, 14298,500ՄՀգ/11498,500ՄՀգ հաղորդման/ընդունման» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված №0335 ռադիոհաճախականությունների

օգտագործման թույլտվության պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝  
համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 7-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
----- 2018 թ.